ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И
НАУКИ
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ПЕДАГОГИЧЕСКИЙ
УНИВЕРСИТЕТ
ИМ. Х. АБОВЯНА

E-mail:rector@nt.am www.contact.am fax.(3741) 529747

Երևան-10, Տիգրան Մեծի 17 Հեռ., Тел.: 52-26-04 Ереван-10, Тигран Меци 17

Ձեր _____ մ/մ
на Ваш _____ н/вх

№ 22108.1.6-970
№ _____

« 7 » 08 2009թ.

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր N 1-04/943 30.07.2009թ. գրության հայտնում ենք, որ համալսարանի ընդհանուր մանկավարժության , էկոլոգիայի և բնապահպանության ամբիոններում քննարկվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի փաթեթը:

Հիմնականում հավանություն տալով հայեցակարգի բովանդակությանը և այն լիարժեք և համապարփակ դարձնելու համար ներկայացնում ենք մեր դիտողություններն ու առաջարկությունները:

• Մեր կարծիքով բնապահպանական կրթություն հասկացությունը նեղ է, անհրաժեշտ է գրել էկոլոգիական կրթություն, քանի որ այն ավելի լայն հասկացություն է և իր մեջ ներառում է գիտելիքներ մարդու և կենդանական աշխարհի, կենսոլորտի, ջրոլորտի, քարոլորտի և այլնի, դրանց փոխհարաբերությունների, ինչպես նաև բնության մասին, որոնք սովորողները ստանում են կրթության տարբեր աստիճաններում:

• Ճիշտ չեն սահմանված էկոլոգիական կրթության, դաստիարակության և իրազեկման միասնական ազգային համակարգի ստեղծման սկզբունքները /5-րդ կետ/: Մեր կարծիքով նշվածները միջոցներ են:

Հանձնաժողովի
[illegible]
[illegible] քարտ
4-1930
07 08 2009

Սկզբունքները հետևյալն են՝

• հաջորդականության և անընդհատության սկզբունքի իրացումը էկոլոգիական կրթության համակարգի կառավարման մեջ,

• մարդասիրության սկզբունքը,

• կանխատեսման սկզբունքը,

• համերկրային, հանրապետական և տեղային, էկոլոգիական խնդիրների փոխկապակցության սկզբունքը,

• համակարգվածության սկզբունքը,

• էկոլոգիական փոխազդեցության և ինտեգրացիայի սկզբունքը,

• Հիերարխիկ կառավարման սկզբունքը:

• Հայեցակարգից դուրս են մնացել էկոլոգիական կրթության գերակայությունները և գործառույթները՝ սոցիալ-մշակութային, բնաճանաչողական, բնապահպանական,

• Մշակված չեն հայեցակարգային դրույթների իրացման մեխանիզմներն ու միջոցները,

• Ամբողջ փաթեթը ունի լեզվաոճական խիստ խմբագրման կարիք:

Հաղորդում ենք նաև, որ համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի կողմից մշակվել և մեթոդական ձեռնարկների ու մենագրության տեսքով տպագրվել են՝

Լ.Թ.Ասատրյան «էկոլոգիական դաստիարակության բովանդակությունը միջին դպրոցում» 2000թ. 96 էջ,

Լ.Թ.Ասատրյան, Փ.Ա.Սարգսյան «Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը», 2002թ. 96 էջ:

Լ.Թ.Ասատրյան, Լ.Գ.Ավանեսյան, Ա.Ս.Սահակյան «էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում», 2003թ. 118 էջ:

Լ.Թ.Ասատրյան «էկոլոգիական այբբենարան», երեք մասից՝ անկենդան բնություն, բույսեր, կենդանիներ, 2006թ.

Լ.Թ.Ասատրյան «էկոլոգիական կրթության կառավարման հիմունքները» 2006թ. 336 էջ, որոնք կարող են օգտակար լինել հայեցակարգի ամբողջացման համար:

Գրությանը կից ներկայացնում ենք մի քանի ձեռնարկներ:

Միաժամանակ մեր պատրաստակամությունն ենք հայտնում մասնակցելու սույն փաթեթի վերջնական ձևակերպման և խմբագրման աշխատանքներին:

ՌԵԿՏՈՐ Ա.Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ